

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՈՒՂԵՐՁ «ՄՈՒՐԺ»-ԻՆ: Մօտ օրերս ամսագրիս խմբագրին ներկայացան Թիֆլիսի 13 կրթած արհեստավորներ և չափոնեցին իրանց չնորհակալիքը այն ուղադրութեան համար, որ նւիրում է «Մուրճ»-ը բանւորների և արհեստավորների խնդրին:

«ՄՈՒՐԺ»-Ը ՆԻՒՐՈՂՆԵՐ—(Շարունակութիւն. սկիզբը տես №№ 1 և 2): 15) Կազմարար պ. Եղիա Տէր-Խաչատրեան (Թիֆլիսում) «Մուրճի» մի օրինակը նւիրում է իւր հալոյնի Ազա գիւղի (Նախիջևանի գաւառ) հաւոց եկեղեց.-ծխական դպրոցին:

16) Ղզլարից պ. Ալեքսանդր Մամաջանեան մի օրինակ «Մուրճ» նւիրում է Ղզլարի հաւոց եկեղ.-ծխակ. դպրոցին:

17) Մեր աշխատակից պ. Ս. Բալաղեան մի օրինակ «Մուրճ» նւիրում է Գանձակի Սուրբ Լուսաւորիչ հաւոց եկեղ.-ծխակ. դպրոցին:

18) Մեծ-Ղարաքիլիսից Խորէն քահ. Խանգաղեանց, գրելով նոյն գիւղի հաւոց եկ.-ծխակ. ուսումնարանի համար, 3 ռուբլի ևս թողել է մեր կարգադրութեան տակ, որ և աւելցնելով Ալեքսանդրոպոլի գաւառի Գեչրու գիւղի ուսումնարանից ստացած 3 ռուբլու վրայ—լատկացրինք այդ ուսումնարանին ուղարկող «Մուրճ» ի ըստանորդազինին:

ՆԻՒՐՆԵՐ ՎԵՀԱՓԱՌ ԿԱԹՈՂԻԿՈՍԻՆ: «Արարատ» ամսագրի մարտի տետրում տպագրւած է հետեւեալը Վհատիառ Հալրապետի ստացած գումարների մասին, որ արտատպում ենք խմբագրական թեթև փոփոխութիւններով:

«Վհատիառ Հալրապետի Ս. Եջմիածին ժամանելուց մինչև այսօր Վհատիանում ստացւած դրամական նւիրաբերութիւնները սոքա են:

«Մեծ. Ժամարեան եղբայրները նւիրեցին 17,000 ռուբլի անձեռնմխելի, որի տոկոսը պիտի գործադրւի կրթական նպատակով:

«Մոսկւաքնակ Նոր-Նախիջևանցի Հաւերը Նւիրեցին»	3000	ա.
«Արշաւաքնակ	—	—
«Եկատերինողարի	—	—
«Արշաւակի	—	—
«Բաղաւաքնակ	—	—
«Մոսկւայից Ժամհարեան եղբայրները կրկին	2000	ա.
Ընդամենը	25,610	ա.

Դուրս գալով ընդհանուր գումարից Ժամհարեան եղբայրների 17,000 ուսուրու պաշտանակա՛ն նւէրը, կըստացի 8610 ուսուրի, որ անպաշտան կերպով նւիրւած է Վեհ. Հաւրապետին: Այս գումարից Վեհ. Հաւրապետը բարեհաճեց 2000 ա. ուղարկել Կ. Պոլսի ս. Պատրիարքին՝ սովեալներին հասցնելու. իսկ մնացեալ գումարից ա՛հա վեց ամիս է, որ ամեն օր երկու սեռի և ամեն հասակի սոված և մերկ հարկւրաւոր գաղթականներ և տեղակա՛ն բնակիչներ դիմում են Նորին Վեհափառութեանը և, զրամական ու բարոյական մխիթարութիւն ստանալով, հեռանում են վեհարանից, օրհնելով Հաւոց ազգի բարեւէր և եղբայրասէր նւիրատուներին: Մինչո՛ւն միջոցին, Վեհ. Կաթողիկոսի անօրինութեամբ, կարօտեալներին մասնատրուած է զրամական օգնութիւն: Մայր Աթոռիս գանձապահի միջոցով:

Այսպիսով, ուրեմն, վերջապէս հասկացեց հաշւետւութեան կարեւորութիւնը ս. Էջմիածնի կողմից: Կարող ենք աւելցնել, որ դա մի անհրաժեշտութիւն էր ա՛յն սխալ լուրերից չետոյ, որոնց համաձայն Վեհ. Հաւրապետին նւիրւած գումարները իբր թէ վստա՛ն հազարի էր հասնում: Բացատրութեան կարօտ չէ, թէ տարածւող սխալ լուրերը ինչ հետեանքներ կարող են ունենալ: Բայց մենք կը ցանկալինք որ աղպիսի հաշւետւութիւնները կատարւէին ոչ որպէս հերքումն սխալ լուրերի, այլ բոլորովին ինքնաբերաբար, իբր սխտեմ, իբր կարգի պահանջ:

Այս ասելուց չետոյ մեզ մնում է միայն զարմանալ ստացւած գումարների փոքրութեան վրայ, որը ոչ մի կերպ պատիւ չի կարող բերել Հաւոց ազգին, ա՛յն ազգին, որը Վեհափառ Հաւրիկի արժանապալել և փառալեղ ընդունելութիւններով՝ ամբողջ աշխարհին հասկացնել տւեց իւր պատրաստականութիւնը մեծ զոհաբերութիւններ անելու: Խրիմեան Հաւրիկը տեսել է ոչ թէ հազարներ, այլ հարիւրաւոր հազարներ դեռ ևս կաթողիկոս չընտրւած: Եւ միայն պատիւ է բերել Նորան ա՛յն գործադրութիւնը, որ Նա արել է իբր սոսկ վարդապետ, եպիսկոպոս և արքեպիսկոպոս, իբր առաջնորդ և պատրիարք:

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԻԿԻ ԾՆՆԴԵԱՆ ՆՈՐ ՏԱՐԵԴԱՐՁԸ: Ապրիլի 4-ին, Վեհափառ
Կաթողիկոսի ծննդեան 74-երորդ տարեդարձը մենք չնորհա-
ւորեցինք հետեւալ հեռագրով.

«Էջմիածին.

«Սրբազնագոյն Կաթողիկոսին:

«Մուրճ»-ի խմբագրութեան անունից չնորհաւորում եմ
Ձերդ Վեհափառութեան մուտքը Ձեր թանկագին կեանքի
եօթնասուն և հինգերորդ տարեշրջանը: Թող Տէրը պահպանի
Ձեր ուժերը երկար տարիներ Հայրենիքի բարօրութեան և
Հայաստանեայց եկեղեցու փառքի համար»:

ՏԱՃԿԱ.-ՀԱՅԱՍՏԱՆԻՅ: Հեռագիրը հաղորդեց թէ մինիստր Հարկորտ Կաթո-
նեց համալսարանի ժողովում թէ Բարձրագոյն Դուռը ուղար-
կել է Տաճկա Հայաստան մի լաւ ծառայող, որի տեղ հասնելուն
պէս՝ մի քանի հալ բանտարկեալներ, որոնք դաւադրութեան
մէջ մեղադրուած են՝ ազատեցին. բանտարկութեան դատա-
պարտած են 17 հոգի, իսկ մահաւան պատժի՝ 15. Հայեր: Դուռը
խոստացել է՝ դատաւճիռը չհատատաւած՝ Կ. Պոլսում իբր թէ
խնամքով վերատուգել դատաւճիռի շարժառիթը:

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԴԻՄՈՒՄԸ ՍՈՎԵԱԼՆԵՐԻ ԵՒ ԿԱՐՕՏԵԱԼՆԵՐԻ ՕԳՏԻՆ,
«Արարատ» ամսագրի մարտի համարի լաւելածում տպած է
Վեհ. Կաթողիկոսի կոնդակը, որով Նա դիմում է ռուսա-Հայե-
րին, չորդորելով որ հանգանակութեամբ իրան միջոց տրւի ալն
բազմաթիւ կարօտեալներին օգնելու, որոնք Տաճկա-Հայաստանի
սովի պատճառով գաղթածները և Կարսի ու Երևանի ճահանգ-
ների տառապեալները ամեն օր իւր օգնութեանն են դիմում:

Այդ նշանաւոր կոնդակը մենք արտասպում ենք «Մուրճին»
ներկայ համարում:

Կ. ՊՈԼՍԻ ՊԱՏՐԻԱՐԻ Խորէն արքեպ. Ա շ ը դ ե ա ն ի ն մարտի 13-ին,
մի երիտասարդ՝ Յակոբ Կիրակոսեան, փորձեց սպանել ռուս-
ւերով: Պատրիարքը այդ օրը գտնուում էր Վուստ Գափուի մալը
եկեղեցում, և անցքը պատահեց վանքի դրան մօտ, երբ պատ-
րիարքը իւր սւրտալով դուրս էր գալիս եկեղեցուց: Ռուսէրը
սակալն չգործեց, չնայած որ Յակոբը երեք անգամ փորձեց հար-
ւածել: Վրիպելու պատճառը վերագրում են ալն բանին որ Յա-
կոբը մոռացել էր ռուսերի չոմպոլը բարձրացնել: Յակոբը 20
—22 տարեկան է, ծառայում էր իբր դորձակատար շաքարի
մի խանութում: Նորան ձերբակալեցին: Պատրիարք Աշրգեանը
տեղափոխեց Մաքրիգիւղ թաղը և տեց իւր հրաժարականը:
Յալոսի է որ Աշրգեանը տարիներ առաջ տեղ էր իւր հրաժա-

րականը և Ազգային ժողովը ընդունել էր այն. բայց Սուլթանը չընդունեց այդ հրաժարականը և Աշըգեանը մնաց պառ-
րիարք միմիայն ցանկութեամբ Սուլթանի, հակառակ Ազգային
ժողովի, որը ալօժ միայն անունով գոյութիւն ունի: Ներկայ
հրաժարականը նոյնպէս ընդունւած չէ դեռ ևս:

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԼՈՒԽ Ընտրւած է պ. Լևոն Տիգրանեանց 13 ձայնով
ընդդէմ 8-ի: Նա միակ էր քէշարկւում բոլոր առաջարկ-
ւածներին:

ԿՐՃԱՏԻԱԾ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ. Բացի այն քաղաքային
ինքնավարութիւնից, որ գոյութիւն ունի Ռուսաստանի կարե-
ւորագոյն քաղաքներում, որպէս նաև մեզանում՝ Թիֆլիսում,
Բաքում, Երևանում, Բաթումում, կալ նաև քաղաքային ինք-
նավարութիւն աւելի կրճատւած իրաւունքներով, այսպէս կոչ-
ւած упрощенное городское управление, կրճատւած քաղաքա-
յին ինքնավարութիւնը ներկայ գարնանից գործադրւելու է
Կոթոր աւանում (որ Թիֆլիսին ամենամօտ ամարանոցն է),
Ախալցխա և Գորի քաղաքներում, ուր առաջ գործում էր նախ-
կին լիակատար քաղաքային ինքնավարութիւնը: Կրճատւած
քաղաք. ինքնավարութիւնը ենթադրւած է մտցնելու Թիֆլիսի
նահանգի նաև ալլ գաւառական քաղաքներում, որպիսիք են՝
Սղեախ, Թելաւ, Դուշէթ և Ախալքալաք, ուր մինչ այսօր քա-
ղաքային վարչութիւնը ոստիկանութեան ձեռքումն էր: Իսկ
օրէնքով՝ ոստիկանական վարչութիւնից անցնելու համար լիա-
կատար քաղաքային ինքնավարութեանը՝ պահանջւում է օրէնս-
դրական վճիռ: Նոյն հիման վրայ կրճատւած քաղաք. ինքնա-
վարութիւնը երևի մոտք է գործելու նաև Անդրկովկասի բո-
լոր գաւառական փոքրիկ քաղաքները:

Կրճատւած քաղ. ինքնավարութեան գլխաւոր կէտերը սո-
քա են. գործադիր մարմինը այդ դէպքում ոչ թէ քաղաքային
վարչութիւնն է (ուպրաւա) մի քանի անդամներից բաղկացած,
քաղաքագլխով միասին, այլ քաղաքային ստորոտ ա մի
կամ մի քանի իրան ստորադրեալ օգնականներով. և փո-
խանակ մի քանի տասնեակ ընտրւած ձայնաւորներից բաղկա-
ցած քաղաքային խորհրդարանի (դումա): այնտեղ կալ մի ժո-
ղով 12 կամ 15 քաղաքային լիազօրների (уполномоченные):
Այդ ձև ինքնավարութիւնը աւելի էժան է նստում, մինչդեռ
փոքրիկ քաղաքներում լիակատար ինքնավարութեան ծախքը
կազմում էր՝ համեմատած քաղաքային եկամտների հետ՝ օրի-

նակ Քութախում $15^{\circ}/_{0}$, Ախալցխայում $25^{\circ}/_{0}$, Գորիում մինչև անգամ մինչ $50^{\circ}/_{0}$ ։

Միւս կողմից, եթէ մեծ քաղաքներում լիակատար քաղ. ինքնավարութիւնով ձաջնաւորներին ընտրում են միայն աջ տնտեսէիերը, որոնց կալածքը առնւաղն 300 ռուբլի արժողութիւն ունի, կրճատած քաղաք. ինքնավարութեան համար լիազօրներից ընտրում են բոլոր աջ տնտեսէիերը, որոնց կալքը 100 ռուբլու արժողութիւնից պակաս չէ։

Բայց կարեւորագոյնը կրճատած քաղ. ինքնավարութեան մէջ աջն է, որ նա չունի երկու էական իրաւունքներ, 1) տալ պարտաւորիչ վճիռներ և 2) փոխել քաղաքալին պլանները։ Մինչդեռ լիչւածներից մանաւանդ առաջինը շատ կարեւոր նշանակութիւն ունի քաղաքալին բարեկարգութեան խնդրի մէջ։

Հիմնելով աջն բանի վրայ որ լիակատար քաղ. ինքնավարութիւնը նշանակւած է ոչ միայն «նահանգական շրջանալին և կարեւորագոյն գաւառական քաղաքների համար», այլ և «ուրիշ քաղաքալին բնակութիւններին» համար, Անդրկովկասի մի քանի նահանգապետներ բարձր կառավարութեանը խըղիւրժ են մատուցել լիակատար քաղ. ինքնավարութիւնը մտցնել ոչ միայն 30 հազար բնակչից աւելի ունեցող քաղաքներում, այլ և ուրիշ աւելի փոքրիկ քաղաքներում։ Թիֆլիսի քաղաքալին գործերի նահանգական տեսանը դիմել է նոյն խըղիւրժով չօգուտ Ախալցխալի և նահանգի մի քանի այլ քաղաքներին։ Իսկ տեղական հասարակութիւններից, «Նոյնի (Օրոգրենիէլի) վկայութեամբ, այդ խնդրով հետաքրքրւած են ցոյց տալիս միայն սակաւները՝ Գանձակը, Ալէքսանդրապոլը և Սուխումը։ Մնացածները մինչ ալժմ կատարեալ անտարբերութեամբ են վերաբերել դէպի այդ կենսական հարցը։

ՎԱՆԱԿԱՆ ԴՊՐՈՑՆԵՐ ԲԱՀԱՆԱՅԱՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ։ Լուրեր են հաղորդում իւր Վեհափառ Վաթողիկոսի հրամանով վանական զըպրոցներ են հիմնւում մի քանի վանքերում՝ Հաղպատում, Տաթևում՝ ընծալացուներ պատրաստելու համար։

ԿՈՒՐԱՆԵՐ ԳԻՒՂԱԿԱՆ ՏԻՐԱՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐ. Թիֆլիսի թեմի առաջնորդ սրբ. Գէորգ եպ. Սուրենեանց մի լաւձնաժողով է կազմել Թիֆլիսի քահանաներից, որը զլուգական տիրացուների համար լատուկ կուրսերի ծրագիր պիտի մշակէ։ Կուրսերում դասախօսելու են սրբազան առաջնորդից նշանակւած ձեռնհաս քահանաներ։ Մանրամասնութիւնները մեզ չալտնի չեն։

ԳԱԼՈՒՍՏ ՏԵՐ-ՄԿՐՏՁԵԱՆ, միաբան ս. Էջմիածնի, ընտրւած է Մոսկւայի կայսերական Ընկերութեան թղթակից-անդամ, Ընկերութեան նիստում առ 28 փետրւարի, անդամների միաձայն հաւանութեամբ: Գալուստ Տէր-Մկրտչեան գրականութեան մէջ չափն է զլսաւորապէս իբր մեկնարան Մովսէս Խորենացու, սրամիտ և հմտալից հետազոտող հին ձեռագրերի և առ հասարակ ճանաչող մեր հին մատենագրութեան: Նորա ուսումնասիրութիւնների շարքը «Արարատ»-ում տպագրելիս շտապեցինք մեր ընթերցողների ուշքը դարձնել գրականութեան մէջ նոր երևացող և մեր հետազոտողների մէջ ալդ անսովոր թարմ մտքի և գրչի վրայ («Մուրճ» 1891, № 2), որպէս նաև «Մուրճ»-ը միակը եղաւ որ արժանի դատեց մի մանրամասն գրախօսութիւնով ծանօթացնել Միաբանի ալն փոքրիկ գրածքի հետ Ուրարտեան բեեռագրերի մասին, որ գրաւեց իւր վրայ Մոսկւայի կայսերական հնագիտական Ընկերութեան ուշադրութիւնը:

Գալուստ Տէր-Մկրտչեանը սրկատ չափն է նաև մեր անհամակրելի թերթերից, ուր նորա անունը ալլապէս չէ կոչուել մինչ ալժմ քան «տիրացու» անունով: Եւ բազդի տարօրինակ հեղնութեամբ մեր չարգելի բանասիրի մասին վերը առաջ բերած լուրը առաջին չափնողը («Արձագանքն» եղաւ, որը ոչ միայն իւր համար գործ ու փնչակ էր չինել Գալուստ Տէր-Մկրտչեանի հիւանդ դրութիւնը ծաղրել (նա չի կարողացել հոգևոր բարձր աստիճաններ ստանալ միմիայն իւր անբուժելի հիւանդ դրութեան պատճառով), ալ և մեծ զոռւութեամբ աշխատում էր լռել նորա գիտական վաստակների մասին...

ԹԻՖԼԻՍԻ ԶԱՅՈՅ ՀՐԱՏԱՐԱԿԱԶՍԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ տարեկան ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ մարտի 26-ին, քաղաքալին խորհրդարանի դահլիճում, մասնակցութեամբ 60 - 65 հոգու, նախագահութեամբ բժշկ. պ. Բագրատ Նաւասարդեանցի, որը ալդ պաշտօնին ընտրուեց բաց քւէարկութեամբ, մեծամասնութեամբ 27 հոգու ընդդէմ պ. Ա. Արասխանեանցի որ ստացաւ 20 ձայն: Տպագրած Տեղեկագրից, որ կարդաց վարչութեան նախագահ պ. Ա. Բալանթարը, երևաց որ ընկերութիւնը հաշվարարում հրատարակել է ընդ ամենը 12 զիւրք կամ բրոշիւր, որոնցից երկուսը (Խրիմեան Հայրիկի «Դրախտի Ընտանիք» և «Սիրաք և Սամուէլ») արտատպութիւններ են, մնացածներից 4-ը («Փարաւօնի աղջիկը», «Էլգուշա», «Զորքորդ մող» և Ֆլամմարիոն «Աստղաբաշխութիւն») թարգմանութիւններ են, երկուսը մանր բրոշիւրներ («Պատեօր», «Խոլերա»)

մէկը աւելի խոշոր շարադրութիւն (Լուսկիւն «Հանրամատչելի քնախօսութիւն») և մէկը ինքնուրոյն փոքրիկ գրածք («Խարազի տղա») Ս. Քամալեանի),

Իբրև մի Ընկերութեան գործունէութիւն, մենք գտնում ենք որ դա «լղա» գործունէութիւն է:

Հաշւատարում (1893 թ.) Ընկերութիւնը ունեցած է 303 անդամ, 41 անգամ վարչութեան նիստ, 25 անգամ խմբագրական նիստ, 2 անգամ խառն նիստ, 1 անգամ ընդհանուր ժողով:

Մուտք ունեցած է 5156 ռուբլի 31 կոպ., ծախք՝ 5342 ռ. 60 կոպ.: Ժողովը, նիստի վերջում, զբաղեց ընտրութիւններով փոխարէն աչն վարչական և խմբագրական անդամների, որոնց ծառայութեան ժամանակամիջոցը լրացել էր:

Վարչութեան անդամ-գանձապահ ընտրեց պ. Արշակ Տէր-Գրիգորեան, սոսկ անդամ՝ Խ. Խաչատրեան, անդամ-քարտուղար՝ Յովսէփ Ամիրխանեան:

Խմբագրականի համար՝ պ. պ. Սամուէլ Բալաղեան և Արշակ Բարխուդարեան (գրեթէ միաձայն, ստացած լինելով միայն 3-4 սև, մնացած մօտ 60 քէ սպիտակ), Յակ. Քոչարեան (55 սպիտակ և 8 սև), Համբարձում Առաքելեան (17 սև), Քւէարկւտղներից էր Նաև պ. Գէորգ Աստածատրեան, որը պակաս քէ ստացաւ:

ՀԱՅՈՅ ԲԱՐԵԳՐՈՒԾԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՇՈՒՇԻԱՅ ճիւղ: Մարտի 13-ին Ընկերութեան ընդհանուր ժողովում ընտրեցին վարչութեան անդամներ՝ Ղուկիքեայեանց Սարգիս, Ներսէսեանց Դաւիթ և Շահնաղարեանց Եղիա: Փոխ-անդամներ՝ Տէր-Սահակեանց Բագրատ, Ղարաջեանց Գէորգ, Աբրահամեան Անդրէաս:

ԵՐԵՒԱՆԻ ԹԵՄԱԿԱՆ ԳՊՐՈՑՆԵՐԻ ՀՈԳԱԲԱՐՁԱԿԱՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐ: Մարտի 27-ին Երեանում կատարեցին նոյն քաղաքի թեմական դպրանոցի նոր հոգաբարձուների ընտրութիւնը, որի համար նախապէս ընտրած էին քաղաքի հաւոց եկեղեցիներում 38 ծխական պատգամաւորներ: Պէտքէ ընտրւէին 6 հոգաբարձու և 4 անձնաւորխանորդ: Մասնակցութեամբ 32 ներկա պատգամաւորների ձայների կէսից աւելի մեծամասնութեամբ ընտրեցին հոգաբարձու պ. պ. Յ. Սարուխանբէգեանց, բժ. Յ. Յովհաննիսեանց, Յ. Մելիք-Աղամալեանց, Ա. Աֆրիկեանց, Զ. Գէորգեանց և Գ. Սիմէոնեանց, իսկ անձնաւորխանորդ՝ Գ. Տէր-Խաչատրեանց, Դ. Անտոնեանց, Լ. Եղիաղարեանց և Յ. Մելիքեանց:

ԹԻՖԼԻՍԻ ՓՈԽԱԳԱՐՁ ՎԱՐԿԻ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ: Այդ ընկերութեան տա-

րեկան ընդհանուր ժողովը կապցաւ 27-ին մարտի Թիֆլիսի ժողովարանի դահլիճում, մասնակցութեամբ 411 անդամներէ։ Նախագահում էր նախկին քաղաքագլ. Ա. Մատինեան։

Հաշվետարաւ ընթացքում Ընկերութեան դրամագլուխը 872,480 ռուբլուց բարձրացաւ 919,160 ռուբլու, անդամների թիւը 1,070 հոգուց բարձրացաւ 1,108 հոգու, չնայած որ 46 հոգի դուրս էին եկել մահւան կամ ալ պատահական դէպքերով։

Ընկերութեան ընդհանուր շրջանառութիւնը հաւասարւեց 199,830,064 ռուբլու 52 կոպէկի, ալսինքն աւելի էր քան անցեալ տարի 61,811,634 ռուբլով։

Պահեստի գումարը, որ կազմում է տասը տարւանից դէս միայն՝ ալժմ հասել է 127,181 ռ. 76 կոպ., իսկ հաշվետարաւ օգտի մասով և դրամագլխի տոկոսներով նա ալ տարի երեքի համեմուտ է 150,000 ռուբլու։

Առևտրական մուրհակների գեղջը աւելացել է նախընթաց տարաւ համեմատութեամբ 748,034 ռուբլով և 37 կոպ., տոկոսաբեր թղթերով ապահոված պարտք տրւած է աւելի քան նախկին տարում՝ 384,465 ռուբլով։ Յատուկ ընթացիկ հաշիւը աւելացել է 204,370 ռուբլով և 70 կոպէկ։

Գործերի ալդալիսի զարգացման պատճառով հարկատոււեց աւելի լաճալս դիմումներ անել պետական բանկի տեղական ճիւղին, մասամբ մուրհակների կրկնազեղջի, մասամբ չատուկ ընթացիկ հաշիւ համար։

Հաշվետարաւ գումար օգուտը եղած է 116,269 ռ. 90 կ., ուրեմն աւելի քան նախկին տարում 13,804 ռ. 67 կոպ., ալնպէս որ դիւլիդ էնդ մնում է 9 ռ. 25 կ. անդամների ներմուծած ամեն 100 ռուբլու համար։

Ժողովում զեկուցւեց որ ընկերութեան պաշտօնեաների կենսաթոշակալին կանոնադրութիւնը մշակելու գործը չեղած ձգւում է։

Ապա ժողովը անցաւ ալն պաշտօնատար անձերի ընտրութեանը, որոնց ծառայութեան ժամանակամիջոցը լրացել էր։

ԱՂԱԼԱՐՈՎԻ ՀՈՂԵՐԻ ՎԱՃԱՌՈՒՄԸ։ Մարտի 16-ին Գանձակ քաղաքում կապցաւ աճուրդով վաճառումը Եւախ-միւլքի հողերի, որ պատկանում էին հանգուցեալ Գաւիդ-խան Զիւանշիր-Աղալարովին թրքական խաներից (քրիստոնէութիւն ընդունած ռուս դերասանուհի Սէտովալի հետ ամուսնանալու համար)։ Աղալարովի վիշեալ կալքը գտանւում է Գանձակի նահանգի

Զիւանշիրի գաւառում, որի մէջն է երկաթուղու եւլախ կալա-
րանը, ձգւում է մինչ 20 վերստ Լուր գետի աջ ափին, ներ-
կայացնելով աղպիսով Լովկասի թերես ամենամեծ կաւած-
քը, մօտ 34,000 դեսետին կամ 37,000 ֆրանսական հեկ-
տար։ Կալքը ծախւում էր աճուրդով, այսինքն զատարանա-
կան կարգով՝ հանգուցեալ տիրոջ պարտքերի համար որ
հասնում էին 200,000 ուրբլու, որից մօտ 70,000 ուրբլի հան-
գուցեալի կոշ պահանջն էր։ Աճուրդին մասնակցեցին չորս
հոգի, որոնցից երեքը տեղացի պ. պ. Առաքել Ծատուրեան
(Բագլից) բազմեցի թուրք հաջի Ազա Թաղիեւի հետ միասին
և Գանձակեցի Նաբաթեան, և մէկը՝ Ռուսաստանի առաջին
կարգի վաճառական ինժեներ Պալաշկովկոյ։ Կալքը մնաց
ամենաշատ առաջարկող Պալաշկովսկու վրայ 205,000 ուրբ-
լիով։ Մրցողներից Նաբաթեանը գնաց մինչ 150,000 ուրբ-
տուրեանը Թաղիեւի հետ՝ մինչ 200,500 ուրբլի։
Բայց զանազան պատճառներով ալի աճուրդի օրինաւորութիւնը
դեռ ևս վիճելի է. հետևապէս խնդրը մնում է առկալի։

Մի համեմատութիւն Անգլիայի հետ 1863 թւականին
չորրորդ տպագրութեամբ լոյս տեսած Léonce de Lavergne-ի
գրքում, *Essai sur l'économie rurale de l'Angleterre, de l'E-
cosse et d'Irlande*՝ համաւաւոր հեղինակը (էջ 115—116)
լիշում է իբր Մեծ-Բրիտանիայի ամենամեծ կալածատէր՝ դուքս
օֆ Սուլթերլանդ, որը մի հատ կտորով ունի 300,000 հեկտար
հող (ուրեմն Ազալարովի միւլքից մինչ ութ անգամ աւելի մեծ՝
Շոտլանդիայի հիւսիսային մասում, բայց ալի հողերը, ասում է
նա, արժեն միայն 100 ֆրանկ (25 ուրբլի ոսղի) մի հեկտարը
ուրեմն ամբողջը $7\frac{1}{2}$ միլիոն ոսկի ուրբլի, իսկ ալժման թուղթ
փողով 10—12 միլիոն ուրբլի։ Մի ալ մեծ կալածատէր՝ մար-
կիզ օֆ Breadalbane Շոտլանդիայի մի ալ մասում ունէր գրե-
թէ նոյնքան նոյն արժողութեամբ»։ Բուն Անգլիայի ամենամեծ
կալածատէր լիշւած է դուքս օֆ Նորթհոմբերլանդ, որի հողերի
տարածութեան մասին սակայն թիւ չի բերւած, բայց ի հարկէ
պէտք է շատ աւելի փոքր լինի, քան վերը լիշածները, բայց
և անհամեմատ նոքա աւելի արժէք էին ներկայացնում։

ՂԱԶԲԷԳԻ «ՀԱՅՐԱՍՊԱՆԸ»։ Մեր աշխատակից պ. Մկրտ. Նաւասարդեան
խնդրում է մեզ չափնել, որ արդէն սկսել է թարգմանել վրա-
ցերէնից ականաւոր վրացի վիպագիր Ալէքսանդրէ Ղազբէգի
«Հայրասպան» (Մամիս մկելեի) վէպը։

ԹԻԻՔԻԱՅԻ ՄԵՐ ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ հարկ ենք համարում չափնել որ

ռուսական նոր կանոններով եթէ դրամ է ուղարկուած ոչ «դրամական» ալ միայն պատւիրած (ռեկոմանդէ) ծրարների մէջ, պոստի վարչութիւնը ալ պատւիրած նամակները բացում է և դրամ գտնելով՝ գումարի քառորդ մասը պետական գանձարանն է զրուում, իսկ մնացած երեք քառորդը՝ լանձնում է հասցէատիրոջ: Միւս կողմից, եթէ պատւիրած նամակը ճանապարհին որ և է մէկը բացանելու լինի և գումարը զողանալ—ալ կորուստի համար պոստի վարչութիւնը պատասխանատու չէ: Հետեապէս թիւք. քահայերին, որոնք չաճախ սովորութիւն ունին բաժանորդագները ուղարկել պատւիրած ծրարներով, խորհուրդ ենք տալիս ալղալէս չանել, ալ դրամը ուղարկել դրամական ծրարներին մէջ:

ԱՐՇԷՆ ԵՐԷՅԻ ՔԱՐՈՁՐ» ԵՒ ԱՐԻՍՏԱԿԷՍ ԵՊ. ՍԵԴՐԱԿԵԱՆԻ ՅՕԴԻԱՄԸ: «Արարատ»-ում տպած «Արշէն Երեցի» Գիւղական քահանայի քարոզ» յօդածի առթիւով, որի մասին մեր ընթերցողները կը կարդան ներկայ համարի Ժամանակակից Տեսութեան մէջ, «Մշակի» № 41-ում տպած է Արիստակէս եպիսկոպոս Սեդրակեանի մի յօդածը «Ով հաւատաց» խորագրով: Յօդածի գլխաւոր արժանիքը կապանում է նրանում, որ Փակտորէն մերկացում է եպիսկոպոսների կաշառակերութիւնը՝ քահանաներ ձեռնադրելու համար, 70-ական և 80-ական թւականներին, իսկ միւս կողմից՝ քահանայացու առաջարկող զիւղական հասարակութեան կողմից Հոգևոր իշխանութեան ներկայացրած համախօսականներին և ժողովրդի ստորագրութիւններին շատերի կեղծութիւնը, որպէս նաև ալ դերը որ կատարում են ալղ գործում զիւղական վարձկան փաստաբանները, բարեխօսները: Բացի ալղ, Արիստակէս եպ. Սեդրակեան չափնում է, որ մօտիկ ժամանակում նա լոյս է ընծաւելու 1889 թւին իւր գրած և Սինոդին ուղղած մի ընդարձակ չափաբարութիւնը, որի մէջ նա խօսում է 70-ական և 80-ական թւականներին կատարած քահանայական ձեռնադրութիւնների մասին, կցելով գրքին ալ կարևոր չաւելածներ Սեւորդ է ասել թէ որքան մեծանահամբրութեամբ մենք սպասում ենք ալղ գրքի լոյս տեսնելուն:

Այժմ գալով յօդածի տեսողենցիական կողմին, մենք պէտք է խոստովանենք, որ չնայած յօդածի բանականական ձևին, հեղինակի պահանջները առհասարակ չեն տարբերում Արշէն երեցի պահանջներից: Արշէնի կարծիքով ներկայումս առաջարկող տգէտ տիրացուները անընդունելի են և որ աւելի լաւ է քահանայ չունենալ, քան անարժան քահանայ ունե-

Նալ. դորան հակառակ չէ և Արիստ. եպ. Սեղրակեան: Արշէնը պահանջում է որ հոգևոր կառավարութիւնը ինքը հոգս տանի արժանաւոր քահանայացուներ պատրաստելու. դորան հակառակ չէ և Արիստակէս եպ. Սեղրակեանը: Արշէնը պնդում է որ հոգևոր իշխանութիւնը իւր քարոզներով պիտի գալ օգնութեան գիւղական ժողովրդին՝ արժանաւոր ընծայացուներ ընտրելու համար. նոյն միջոցն է առաջարկում նաև Արիստակէս եպ. Սեղրակեան: Արշէնը պնդում է թէ՛ ներկայումս վանական վարդապետները չեն համապատասխանում իրանց նախկին դերին և որ նոքա բարոյապէս և մտաւորապէս սնանկ են. նոյնը պնդում է նաև Արիստակէս սրբազանը, հաստատելով աչդ մի հեղեղութիւնով՝ Սեանալ վանքի վանահօր վերաբերեալ:

Մենք աջակիտով ուրախ ենք որ երկու իօղւածագիրների հալեացքները շատ կէտերում իրար հետ բռնում են: Միակ իրական, բայց և նշանաւոր տարբերութիւնը երկուսի մէջ մենք գտնում ենք նրանում, որ Արշէն երէցի ասածով՝ Հալրիկը կշռի ծանրութիւնը դնում է ժողովրդի ընտրութեան վրայ, իսկ Արիստակէս եպիսկոպոս Սեղրակեանը՝ ձեռնադրողի իրաւունքի՝ իշխանութեան վրայ: Այդ մասին մեր ասելիքը կասենք քահանայական խնդրի ուսումնասիրութեան մէջ: Իսկ առ ալժմ միայն ցաւելով պէտք է վկայենք, որ «Ուլ հաւատաց» իօղւածի վերջում Հակերտների մէջ դրած տողերը բաւականաչափ զդուշութեամբ և ճշդութեամբ չեն արտագրւած Արշէն երէցի իօղւածից: «Տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր» և բնական կերպով չեն չարմարիր իրար» խօսքերը սրբազան Արիստակէսի իօղւածում վերագրւած են նաև Հալրիկին, մինչդեռ Արշէն երէցի քարոզում նոյն աչդ խօսքեր արտասանողը միայն տգէտ ժողովուրդն է: Ահա բնագրի տողերը. «Եթէ թող տաս, Հալրիկ, գիւղացի կոպիտ խեղճով մի փիլիսոփայութիւն անենք: Մեզ էնպէս կը թւի որ տգէտ ժողովուրդին շատ ուսեալ քահանայ չի կպիր» և այլն («Արարատ», էջ 73, երկրորդ սիւնակ): Եթէ գիւղական ժողովրդի խօսքերը աչդպէս առանց ալ և ալւութեան իրան Հալրիկին վերագրելը թողատրելի լինէր, ապա կարող կը լինէիք դորանից աւելի թուող խօսքեր գնել Հալրիկի բերանը և պնդել իբր թէ Հալրիկը պահանջում է տգէտի համար նաև տգէտ քահանայ, քանի որ հէնց նոյն աչն տողերից անմիջապէս առաջ նոյն գիւղացիք չալտնում են հետեւալը. «Այսպէս մեք խեղճ գիւղացիքս ամեն կողմէ անբաղդ եմք. մեր ճակատագիրն գուցէ աչսպէս է, մեք տգէտ, մեր

քահանան էլ պէտք է մեզ նման տգէտ լինի: Եթէ թույլ տաս, Հայրիկ, գիւղացի կոպիտ խելքով մի փիլիսոփայութիւն անենք... և այլն): Պարզ չէ միթէ որ գիւղացիներ ըր բերանով ինքը Հայրիկը չէ խօսում:

Իսկ իւր ընդհանուր առմամբ սրբ. Արիստակէս եպ. Սեդրակեանի չօդածը լրացուցիչ գրածք կարող է համարել Արչէն երէցի քարոզին. առանց հերքելու Արչէնի հալեացքները՝ նա նորա թույլ կողմերի հակակշիռն է կազմում:

ՍՈՎ.Ը ՏՍՃԿԱ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ, ստույգ աղբիւրներէց մեզ հասած տեղեկութիւնների համեմատ՝ խորը և լայն ծաւալ է ստացել: Մենք կաշխատենք սովի դէմ գործ դրած միջոցների մասին հասկա-Հայաստանում մեզ հասած տեղեկութիւնները իւր ժամանակին ի մի ամփոփել:

ՄԱՄՈՒԼ: «ՄԱՍԻՍ» շաբաթաթերթը, Պոլսի Ուսումնական Խորհրդի օրգանի է փոխարկւել:

† ՆԵՐՍԷՍ ՆԵՐՍԷՍԵԱՆ, պրոֆեսոր, քաղաքացիական իրաւունքի, հռոմայական իրաւունքի և մանաւանդ առեւտրական իրաւունքի դասախօս Մոսկւայի համալսարանում, վախճանւեց մարտի 14-ին: Հանգուցեալը ծնւել էր Շուշի քաղաքում 1848 թականին, գիմնազը աւարտեց Թիֆլիսում, ապա աւարտեց Մոսկւայի համալսարանում, 1875-ին տեւց մագիստրոսի, 1889-ին՝ իրաւաբանի դոքտորի քննութիւն: Հանգուցեալը լաւ դասախօսի համբաւ ունէր: Պրոֆեսորական գործունէութիւնից դուրս հանգուցեալը սիրով մասնակցում էր Մոսկւայի հայ կրօնիւպի հասարակական գործերին: 1884-ին ընտրւեց Բեսարաբիայի թեմի պատգամաւոր կաթողիկոսական ընտրութիւնների համար, ուր պաշտպանեց երջանկալիչատակ Ներսէս պատրիարքի թեկնածութիւնը:

† ԲՐՈՈՒՆ-ՍԵԿԱՐ հռչակաւոր ֆրանսիացի բժիշկ և ֆիզիոլոգ վախճանւեց ներկալ մարտին, 76 տարեկան հասակում: Պարիզի Collége de France բարձրագոյն դպրոցում նա բռնել էր նշանաւոր ֆիզիոլոգ հանգուցեալ Կլոդ-Բերնարի տեղը: Համաշխարհային ուշադրութիւն դարձրեց իւր վրալ երբ 1889 թականի 1/13 լունիսի բիոլոգիական ընկերութեան մէջ նա դեկուցումն արաւ աչն հետեանքների մասին, որ ստացել էր կաշի տակով մարդու մարմնի մէջ ներս սրկելով մի հեղանիւթ, որ ստացւում էր ծովալին խողի և շան մի քանի օրգաններից: Իւր անձի վրալ արած փորձերը ցոյց տւին, որ իւր պատրաստած հեղուկը ներս սրսկելուց չետո՞ նկատւում էր

մկաններին ուժի աճումն և մտաւոր գործունէութեան զօրացումն, Այդ առիթ տւեց բազմաթիւ հետազօտութիւնների և զիտողութիւնների նաեւ ալ գիտնականների կողմից:

ՎՐԻՊԱԿՆԵՐ «Մուրճ» № 2 ում:

էջ	սխալ	ուղիղ
183	դատաւոր	սրտառատ
185	դահերեցութեան	դահերեցութեամբ
185	զօրապետներ ¹⁾	զօրապետներ, առաջնորդներ, քա- մանդարներ ¹⁾
188	չը կարողացաւ	կարողացաւ միայն
192	չի մեղքանում	մեղքանում է
195	դաւազարդ	դաւարազարդ
195	մի անգամ վրա բե- րենք	մի անգամ վրա բերելու փոխանակ երկու անգամ վրա բերենք
208	սպառում	սպառնում
	Պ. Արդահատեանի «Հրէշ» պատմածքում՝	
239	հնաւարտ	հնաւանդ
»	մարդու ներքինին	մարդու ներքինը
237	դավթեց	թարթեց:

«Փառքի տենչը» ոտանաւորը սխալմամբ տպւած է որպէս հեղինակութիւն պ. Ա. Ծատուրեանի, ուղիղն է՝ հեղ. Պուշկինի, թարգմ. Ա. Ծատուրեանի:

ՆՈՐ ՍՏԱՅԻԱԾ ԳՐԻՔԵՐ

- 1) ՅՐԴՈՒՍԻ.—«Զոհակ Բիւրասպի Աժդահակ». ամբողջ վէպ Շահ Նամա-
լից. Ա.—Թարգմանեց բնագիր պարսկերէնից Սամուէլ Դիւլզա-
դեանց: Շուշի, տպ. Մ. Մ. Յակոբեանց, 1894, գինն է 30 կ.
- 2) КАЖЕВНИКОВЪ, В. А.—«Безцѣльный трудъ». Не-дѣланіе или
дѣло? Разборъ взглядовъ Эм. Зола, А. Дюма и графа Л.
Толстого на трудъ. Второе исправл. издание М. В. Ключи-
на. Москва, тип. Гербекъ 1984. цѣна 20 коп.
- 3) ՊՈԿՐՈՎՍԿԻ, Ե. Ա.—«Մանուկների հոգատարութիւնը», Թարգմ. Բժ.
Թ. Զաքարեանի, Հրատ. Թիֆլիսի Հայոց Հրատ. Բնկերութեան:
Հանրամատչելի գիտական գրադարան Թիֆլիս, տպ. վրաց
Հրատ Ընկ. 1894, գինն է 20 կոպ.
- 4) ԵՐԵՅԵԱՆ, Արեւքանդր.—«Ամենայն Հայոց կաթողիկոսութիւնը և Կով-
կասի Հաւք XIX-երորդ դարում»: Մատն Ա. 1800—1832: Թիֆ
լիս, տպ. Մ. Մարտիրոսեանցի և ընկ., 1894, գինն է 2 ո.
50 կոպ. ճանապարհածախսով 3 ռուբլի:
- 5) ՆԱԶԱՐԵԱՆՅ, Էմմանուէլ քահ.—«Զարչարանքի շաբաթը». (Ժողովրդ-
դական ընթերցանութեան համար), վեց պատկերով, Թիֆլիս,
տպ. Շարաձէի: 1894, գինն է 15 կոպ.

Խմբագիր-հրատարակիչ՝ ԱՆՏԻՔ ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ